*535. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, որը գտնվել է Ա. եկեղեցու ներսում.*

Այս է տապան Տր. Յօհանէսին, որդի Տր. կարապետին. թվին։ ՌՄԽԷ։ (1798)։

*Հրատ. Լալայան, II,, 47։*

*536. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, որը գտնվել է Բ. եկեղեցու մեջ.*

Այս է տապան Խմիչի որդուն Սարգիսին. էն ժամանակն որ Պապա Ուստաղին թվին, ։ՌՃՀԴ։ (1725). որ եկն. եւ Թապուղի առաջք տուաղ իլի. այանին ճղովն սպանեցէն, ներքերանցս Աքային. Հերփիս։

*Հրատ. Բարխուդարեանց, 127։*

## 46. ԴԶՂԱԼԱ ԳՅՈՒՂ

*Այս գյուղում և շրջակայքում գտնվող միջնադարյան հուշարձանները XVII դարից ավելի հին չեն. արձանագրություններ ունեցողները հետևյալներն են.*

*Ա.* Մեծ նահատակ, *մատուռ, գտնվում է գյուղից հյուսիս, ձորի մյուս կողմում, բարձր սարի գագաթին, շարված է կիսամշակ քարերով. մատուռի մեջ է անտապանագիր մի գերեզմանաքար. պատերին կան արձանագրություններ։*

*Բ.* Ս. Աստվածածին, *եկեղեցի, գտնվում է գյուղի մեջ, թաղակապ շենք է, կիսամշակ քարերով շինված։*

*537. ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ, արևմտյան պատի մեջ ագուցված մի քարի վրա, արտաքուստ, 4 տող.*

ԵՍՂՋՂԱԼԵՅԻՂԱՐԱՅԽԱՆՍՂԻՆԵՑԻԵԿԵՂԵՑԻՍՀԱՅՐՆ
ԻՄԱՄԻՐԽԱՆԵՒՄԱՅՐՆԻՄՄԻՐԱՄՆԵՒԵՂԲԱՅՐՆԻՄՍԱՐՈՒ
ԽԱՆՊԱՂԻԲԱԲԱՍԻԵՒԿՈՂԱՅԳԻՑՆԻՄՓԵՐԻՆԵՒՈՐԴԻՆԻՄ
ՍԱՐՔԻՍԹՎԻՆՌՃԻԵԷՐ

ԵՍ ԴԶՂԱԼԵՑԻ ՂԱՐԱՑԽԱՆՍ ՇԻՆԵՑԻ ԵԿԵՂԵՑԻՍ. ՀԱՑՐՆ| ԻՄ ԱՄԻՐԽԱՆ ԵՒ ՄԱՑՐՆ ԻՄ ՄԱԻՐԱՄՆ ԵՒ ԵՂԲԱՑՐՆ ԻՄ ՍԱՐՈՒ|ԽԱՆ, ՊԱՂԻ, ԲԱԲԱՍԻ ԵՒ ԿՈՂԱՑԳԻՑՆ ԻՄ ՓԵՐԻՆ ԵՒ ՈՐԴԻՆ ԻՄ| ՍԱՐՔԻՍ. ԹԻՒՆ ։ՌՃԻԵ։ ԷՐ (1676)։

*538. ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ, արևմտյան մուտքի բարավորի վրա, 8 տող.*

ես ղկղէլէյի
ամիրխանէն
տղյ ղարայխա
նս եկի ուխտսի
մնայա տակիսյ
իղատակիիմեկեղ
եցիս կողակից իմ
փերուն ամէն

ԵՍ ԴԶՂԷԼԷՑԻ| ԱՄԻՐԽԱՆԷՆ| ՏՂԱՅ ՂԱՐԱՑԽԱ|ՆՍ ԵԿԻ ՈՒԽՏՍ Ի|Մ ՆԱՑԱՏԱԿԻՍ. ՑԻ|ՇԱՏԱԿԻ ԻՄ ԵԿԵՂ|ԵՑԻՍ. ԿՈՂԱԿԻՑ ԻՄ| ՓԵՐՈՒՆ. ԱՄԷՆ.

Ծանոթ. *Ժամանակով մոտ է նախորդին։*

*539. ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ, հյուսիսային պատի մեջ ագուցված փոքր խաչքարի վրա. ներքուստ, 4 տող.*

խ ա չս
ս ան դ
ու խտ
այն խսա

ԽԱՉՍ| ՍԱՆԴ|ՈՒԽՏ|ԱՅՆ. ԽՍԱ . . .

*540.* ***ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ****, պատի մեջ ագուցված փոքր խաչքարի վրա, 1 տող.*



ԽԱՉՍ ՄԱՄՈՒՆ.

*541.* ***Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ.*** *Ներսում, արևելյան կամարի վրա.*

Ես Ոհանէս ցինեցի եկեղեցիս ի հալալ ինչից իմոց. հայրն իմ Թուման և մայրն իմ Իւսսան, կողակիցն իմ Խանում, հանգուցեալ որդին իմ Ա . . .

Ծանոթ. *Համարում ենք* XVII *դար։*

*Հրատ. Բարխուդարեանց, 122—129։*

*542.* ***Ա. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ.*** *Ներսում, նույն կամարի հյուսիսային երեսին.*

Ես Յովհաննէս եպիսկոպոս վերակացու, ցինեցի եկեղեցիս. հայրն իմ Տաղտան, մայրն իմ Խոնտի. եւ Եղիա fահանայն, տէր Պողոս, տանուտէրն Վելիհան. եկեղեցուս վարպետ Կէսքեր, Յակոբ:

Ծանոթ. *Համարում ենք* XVII *դար։*

*Հրատ. Բարխուդարեանց, 123։*

## 47. ՆՆԳԻ ԳՅՈՒՂ

*Գյուղում գտնվող եկեղեցին, համաձայն արձանագրության, կառուցվել է 1858 թ. բայց նրա պատերի մեջ ագուցված հուշարձանների վրա մնացել են երկուսը, որոնք ավելի հին են։*

*543.* ***ԽԱՉՔԱՐ****, ագուցված է եկեղեցու հարավային կողմի պատուհանի գլխին, կողքի, վրան 2 տող.*



ԹՎ⌊ԻՆ⌋ ։ՋՀԲ։ (1523)։
ԱՂԱ ՄԱՐ . . .

*544.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ****, փոքր, ագուցված է արևելյան պատի մեջ, արտաքուստ, 2 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄՈՒՐՈՒ ՈՐԴԻ ՍԱՋԱՆԴ ՄԻՐԶԱՒՆ. ԹՎ⌊Ի⌋Ն. ։ՌՄԻԶ։ Ն ԷՐ. (1777)։

*545.* ***ԽԱՉՔԱՐ****, գտնվում է Ննգի գյուղից Պառավաթումբ տանող ճամբին ղանվող ս Գրիգոր Լուսավորիչ կոչվող Թաղածածկ եկեղեցու ներսում.*



ԵՍ ԳՐ⌊Ի⌋ԳՈՐ| ԿԱՆԳՆԵՑ|Ի ԽԱՉՍ ՀԱՒՐ| ԻՄ|ՍՑ ԳՐ|⌊Ի⌋ԳՈՐԻԿԱՑ.| Ս⌊ՈՒ⌋ՐԲՍ ՏՐ. Գ⌊ՐԻ⌋ՔՈՐ. Թ⌊Վ⌋ԻՆ⌋ ։ՈՀԴ։ (1225)։